ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սեպտեմբերի 21 -ը յուրաքանչյուր հայի արժանապատվության, ինքնասիրության, զգոնության, սեփական պատմությունը բարձր կրելու նվիրական օրն է: Սեպտեմբերի 21-ը համայն հայության իր հողը, պետականությունը, տունն ու ընտանիքը բարեկեցիկ ու ամուր կանգնած տեսնելու օրն է:

Վստահ եմ, հայ մարդը իր երկրի սահմաններից ներս, թե դուրս երբևէ չի առանձնացրել իր գործն ու կացը, ինչն էլ ապահովել է այլազգիներից տարբերվելու նրանց համար անհասկանալի, մեզ համար ազգային գիտակցության պարզագույն բանաձևի ստեղծմանը:

Այսօր, մեր սեփական հողի սահմաններում ամուր կանգնելով, վճռականության, չհանձնվողի և լինելով սեփական նվիրական հողի անպարտելի կրողը, պարտք ունենք ձգելու մեր ողնաշարը ու ծառայելու նրան ամեն անձնվեր օր, այն մեր երեխաներին, մատաղ սերնդին անկախ, արժանապատիվ փոխանցելու պատասխանատվությամբ:

Հարգելի հայրենակիցներ, մարտունեցիներ,
շնորհավորում եմ ՀՀ անկախության 26 -րդ տարեդարձի առթիվ: